«Երևանի հ. 104 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

«ՇԱԽՄԱՏ»

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

Շաբաթական 2 ժամ (52 թեմա)

II-IV դասարաններ

Ուսուցչուհի՝ Է.Ավետիսյան

2023-2024 **ուստարի**

Բացատրագիր

Շախմատի խմբակը նպաստում է սովորողների մեջ տարբեր կոմբինացիաների ծանոթացմանը, անելանելի իրավիճակներում արագ կողմնորոշվելու, իրավիճակը ճիշտ գնահատելու, խաղի պլան կազմելու, մրցակցին գնահատելու և սեփական դիրքերի կարողությունների ձևավորմանը: Հասնել նյութական առավելության՝ բաց և կիսաբաց գծերում, թույլ դաշտերում, օգտագործել արգելափակում, կիրառել պաշտպանի ոչնչացում, հարձակում, մարտավարական և ռազմավարական այլ հնարքներ: Այն հնարավորություն է ընձեռում հասնելու շահած դրության:

Նախատեսվում է խմբակին հատկացնել շաբաթական 2 ժամ:

Նպատակը՝

- Զարգացնել սովորողների տրամաբանությունը, այլընտրանքային մտածողությունը, կենտրոնացումը, իրավիճակը գնահատելու հմտությունները.
- Բարելավել շախմատային գիտելիքների խորացումը և խաղային որակները.
- Նպաստել դպրոցականների ունակությունների զարգացմանը.
- Բացահայտել շախմատային օժտվածությամբ սաների.
- Նպաստել շախմատ մարզաձևի զարգացմանը

Խնդիրներն են՝

- սովորեցնել ծանր իրավիճակներում արագ կողմնորոշվել և որոշումներ կայացնել,
- առաջադրել նոր մտքեր և գաղափարներ քննարկման արդյունքում,
- վերլուծել ստացած տեղեկությունը՝ համադրելով սեփական կարծիքի հետ,
- ապահովել սովորողի համար հասանելիություն:

Ակնկալող վերջնարդյունքներ՝

- Ամրապնդի գործնական խաղերի միջոցով ստացած գիտելիքները, ձևավորի մտածված, ինքնուրույն որոշումներ ընդունելու, հույզերը կառավարելու, մրցակցին ապրումակցելու հմտություններ.
- Գնահատի արդար խաղն ու ազնվությունը.
- Կիրառի ստացված գիտելիքները գործնականում՝ մասնակցելով դպրոցական, տարածաշրջանային, մարզային օլիմպիադաներին, կարգային մրցաշարերի և զբաղեցնի մրցանակային տեղեր.
- Կարևորի գիտելիքի հստակ կապը կյանքի հետ.
- Կարողանա կայացնել ինքնուրույն որոշումներ.
- Գիտակցի համագործակցված աշխատանքի կարևորությունը.
- Ունենա սեփական մտածելակերպի և կարողությունների նկատմամբ վստահություն:

N	**Թեմաների անվանումները**	**Հատկացվող ժամերի քանակը**
1	Խաղի սկզբունքներ	2
2	Արքայական գամբիտ	1
3	Թագուհու գամբիտ	1
4	Սկանդինավյան պաշտպանություն	1
5	Կարո-Կանի պաշտպանություն	1
6	Սիցիլական պաշտպանություն	1
7	Գործնական խաղային խնդիրներ	1
8	Թունավոր թագուհի	1
9	Թագուհով գրոհ	1
10	Թագուհով և ձիով գրոհ	1
11	Մատ նավակով և թագուհով	1
12	Մատային ծուղակներ	1
13	Գործնական խաղային	1
14	Երկքայլանի մատային խնդիրներ	1
15	Մատային գրոհ վերջին և նախավերջին հորիզոնականներով	1
16	Յոթերորդ հորիզոնական և երկրորդ հորիզոնական,թույլ դաշտեր	1
17	Թուլություն վերջին հորիզոնականում	1
18	Գործնական խաղ	1
19	Երկքայլանի մատային խնդիրներ	2
20	Գրոհ տարակողմ և անբավարար փոխատեղումների դեպքում	1
21	Խորամանկ թակարդներ	4
22	Սխալներ և ծուղակներ	2
23	Զոհաբերությունը հասցնում է հաղթանակի	2
24	Գործնական խաղ	1
25	Երկքայլանի մատային խնդիրներ	1
26	Պաշտպանության վերացման կոմբինացիա	1
27	Մեկուսացում և փակում,դաշտի գրավում	1
28	Փրկել խաղը պարտադրելով ոչ ոքի	1
29	Գործնական խաղ	1
30	Երկքայլանի մատային խնդիրներ	1
31	Գրոհ կենտրոնում գտնվող արքայի դեմ	2
32	Դիրքային խաղի տարրերը	1
33	Դիրքային առավելություն	1
34	Զինվորի դիրքը,զինվորային թուլություններ	1
35	Զինվորային վերջնախաղեր	1
36	Խաբուսիկ քառակուսի,եռանկյան կանոն	2

37	Հեռավոր անցունակ զինվոր	1
38	Զինվորային ճեղքում	1
39	Շրջափակված զինվոր	1
40	Տարբեր թևերում առկա զինվորներ	1
41	Գործնական խաղ	2
42	Առաջադրանքներ.հասնել հաղթանակի	1
43	Վերլուծություն հայ շախմատիստների պարտիաներից	2
44	Առաջադրանքներ. երկքայլանի մատային խնդիրներ	2
45	Գործնական խաղ	1
46	Բաց սկզբնախաղեր	1
47	Փակ սկզբնախաղեր	1
48	Կիսաբաց սկզբնախաղեր	1
49	Կործանում սկզբնախաղում	2
50	Դեբյուտային հինգ թակարդներ	2
51	Առաջադրանքներ.հասնել հաղթանակի	2
52	Գործնական խաղ	2
	Ընդամենը	68 ժամ

Օգտագործվող գրականության ցանկ և հղումներ՝

1. Николай Яковлев- Шахматы, план
2. Владимир Акопян-150 шахматных задач
3. Տիգրան Պետրոսյան-Դեբյուտներ

Հղումներ՝ Chessschool.am, Chess.com

Դիդակտիկ նյութեր և պարագաներ

Շախմատներ, էլեկտրոնային գրատախտակ, համակարգիչ: